

ՀՏԴ 330.59

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

DOI 10.54151/27382559-2022.2a-120

**ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ**

**Հարությունյան Մ. Մ.**

Համավարակի ազդեցությունից անմասն չմնաց բնակչության կյանքի որակը, ինչպես նաև տնտեսական մի քանի ցուցանիշներ, որոնց բացահայտմանն է ուղղված տվյալ աշխատանքը: Դեռևս մեկնաբանված չեն ՀՀ-ում համավարակով պայմանավորված հասարակական կյանքի դրսևորումները, դրա արդյունքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները և հետևանքները: Աշխատանքում ներառված են նաև համավարակի հետևանքով զգալի փոփոխություններ կրած ոլորտներ, ինչպես նաև առաջարկություններ, որոնք հնարավորություն կտան մեղմել տնտեսությունը պատճառված զգալի հետևանքները:

**Բանալի բառեր.** կյանքի որակ, համավարակ, թիրախային ոլորտներ, միջոցառումներ:

Կյանքի որակը մարդկանց ընդհանուր բարեկեցությունը բնութագրող ցուցանիշների ամբողջություն է, որը բնութագրում է մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման մակարդակը՝ դիտարկվելով որպես մի շարք (սոցիալական, հոգեբանական, տնտեսական, քաղաքական և այլն) գործոնների ինտեգրալ համակարգ, դրանով իսկ պայմանավորելով այս աշխատանքի արդիականությունը: 2020թ.-ի համավարակի պատճառով համաշխարհային տնտեսությունը կրճատվեց մոտ 4,4%-ով, տեղի ունեցան սպառողական վարքագծի զգալի փոփոխություններ՝ պայմանավորված մարդկանց դեղերի և բուժօգնության համար կատարվող վճարումներով, կրճատելով իրենց ծախսերը: Հայաստանի մարզերն ու համայնքները լրջորեն տուժել են COVID-19-ի տարածման և համաճարակի հետևանքով առաջացած աճող տնտեսական

դժվարությունների պատճառով [3]: ՄԱԿ-ի իրականացրած սոցիալական և տնտեսական ազդեցության գնահատումը մարզերում բացահայտել է փոխկապակցված գործոններ, որոնք նպաստում են COVID-19-ի համակարգային ազդեցությանը Հայաստանի համայնքների մարդկանց առողջության, տնտեսության և սոցիալական կյանքի վրա: Բազմաչափ ազդեցության գնահատման արդյունքները ստորև.



**Գծապատկեր 1. Համավարակի սոցիալական ազդեցության ցուցանիշներն ըստ մարզերի, % [7]:**

- Ֆիզիկական հիվանդություն
- Հոգեբանական, էմոցիոնալ, հոգեկան առողջություն (սթրես, անհանգստություն)
- Առողջապահական ծառայություններ/օգնություն ստանալու դժվարություն
- Covid 19-ի տարածումից ի վեր աշխատանքի կորուստ
- Հիմնական պահանջմունքների բավարարման դժվարություններ
- Կոմունալ ծառայությունների վճարման դժվարություններ
- Առողջական ծառայությունների փնտրման դժվարություններ
- Ջեռուցման այլընտրանքային տարբերակների որոնում

Իրավիճակով պայմանավորված՝ մարզերում COVID-19-ը ազդել է առողջական վիճակի, այդ թվում նաև կյանքի որակի վրա ամբողջ երկրում: Այն առավել բացասական ազդեցություն է ունեցել մարդկանց հոգեբանական և էմոցիոնալ առողջության վրա՝ չբացատրելով ի հայտ եկած վերոնշյալ գործոններով պայմանավորված դժվարությունները: Այժմ անդրադառնանք կյանքի որակը պայմանավորող ոլորտներին և դրանց վրա համավարակի ունեցած հետևանքներին:


**Կրթություն:** Համավարակն ինքնին փորձություն էր ՀՀ կրթական համակարգի համար: Ըստ ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՈՒՀ) ֆոկուս-խմբային քննարկումների

Ժամանակ հարցված ուսանողների մեծամասնության՝ դասերն առավել արդյունավետ էին լսարանային պայմաններում, դասախոսի հետ անմիջական շփման պարագայում: Մրա վերաբերյալ հետազոտության հարցման մասնակիցների 68,78%-ի պնդմամբ իրենք առավել լավ են սովորում դեմ առ դեմ ուսուցման ժամանակ, և միայն 19,84%-ն է սովորում լավ թե՛ դեմ առ դեմ ուսուցման և թե՛ օնլայն ձևով:

Աղյուսակ 1:

ՀՀ ՄՈՒՀ ուսանողների հարցման արդյունքներ [8]

Առցանց ուսուցման դեպքում	10.51%
Դեմ առ դեմ ուսուցման դեպքում	68.87%
Երկուսի դեպքում էլ հավասարապես	19.84%
Այլ	0.78%
Ընդամենը	100%




Գծապատկեր 2. ՀՀ պետական բյուջեում կրթության ծրագրերի մասնաբաժինը կրթությանը հատկացված ծախսերի մեջ [9]:

Վերոնշյալ գծապատկեր 2-ում պատկերված է մինչ համավարակը և դրանից հետո կրթությանը հատկացված ծախսերում կրթության ծրագրերին կատարված հատկացումները(%):

**Տնտեսություն:** 2020 թվականին Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ), որը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, գրանցել է 7.5% անկում: Ամենամեծ անկումը գրանցվել է ապրիլ ամսին (-16.4%)՝ կապված երկրում սահմանված արտակարգ դրության հետ և դրանից բխող տնտեսական գործունեության որոշ տեսակների նկատմամբ կիրառված ժամանակավոր սահմանափակումներով: Ապրիլի 12-ին ծխախոտային արտադրատեսակների



արտադրության նկատմամբ սահմանափակումները վերացվեցին, ավելի ուշ՝ մայիսի 3-ին, վերացվեցին նաև հագուստի արտադրության նկատմամբ սահմանափակումները, որոնք նպաստեցին մայիսին ՏԱՑ անկման մեղմմանը (-12.9%):

Հուլիս ամսին տնտեսությունում ապրանքների ու ծառայությունների թողարկման ծավալի անկումը խորացավ (-10.2%), ինչը կարող էր պայմանավորված լինել մի քանի հանգամանքով, այդ թվում՝ մշակող արդյունաբերության անկմամբ: Հուլիսին մշակող արդյունաբերությունում գրանցվել էր 3.6% անկում, մասնավորապես դանդաղել էր հագուստի արտադրության ծավալի հավելաճը: Մեպտեմբերին բռնկված և 44 օր տևած պատերազմի, ինչպես նաև կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի աճի ֆոնին տնտեսության անկումը խորացավ հոկտեմբերին և նոյեմբերին (-9.3% և -10.7% համապատասխանաբար): ՏԱՑ-ը տարբերվում է ՀՆԱ-ից: Անցած տարվա վերջին ՀՀ Կենտրոնական բանկը 2020 թվականի Հայաստանի ՀՆԱ անկումը գնահատում էր -7.2%-ի չափով, սակայն ըստ ՀՀ Կենտրոնական բանկի վերջին գնահատականի՝ 2020 թվականի Հայաստանի ՀՆԱ-ի անկումը կազմում է 7.8% [5]:



Գծապատկեր 3. ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020թ.-ին, % [5]:

## Աշխատանքի շուկա



### Գծապատկեր 4.

Գործազրկություն և զբաղվածություն:

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ


### Գծապատկեր 5. Միջին ամսական

անվանական աշխատավարձի կուտակային աճ, 2020թ., %:

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

2020թ. տարեսկզբին արձանագրված աշխատավարձի աճի բարձր տեմպերը, կրելով համավարակի բացասական ազդեցությունները, գնալով դանդաղեցին: 2020թ. հունվար-հոկտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.3%-ով՝ կազմելով 186,428 դրամ: Ընդ որում՝ սպառողական գների ինդեքսի 0.9% աճի պարագայում իրական աշխատավարձն աճել է 3.4%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.3%-ով՝ կազմելով 165,514 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 3.1%-ով՝ կազմելով 196,386 դրամ: [1]:

**Ֆինանսներ:** Այսպիսով, և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց տրամադրված դրամային վարկերի ծավալները, ինչպես երևում է գծապատկեր 6-ից, անկումից հետո վերականգնվել են. ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկերի դեպքում, ֆիզիկական անձանց առումով, էական տատանում չի արձանագրվել, իսկ իրավաբանական անձանց պարագայում տատանողականությունը կարծես թե նույնն է, ինչպես նախաճգնաժամային ամիսներին: Վերջին հանգամանքը, կարելի է ենթադրել, պայմանավորված է ճգնաժամի սկզբում դրամի արժեզրկման ռիսկով, ինչի պայմաններում բանկերն առավել հակված էին արտարժույթով ներդրումներ կատարելու [2]:



**Գծապատկեր 6. Տարբեր արժույթներով՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ամսական ծավալները 2019-2020 թթ. հուլիս ամիսներին (հազ. միավոր) [6]:**

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, խիստ անհրաժեշտ են կառավարության կողմից իրականացվող հատուկ միջոցառումներ կորոնավիրուսի տարածման հետևանքով ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու համար, և որ Covid-19-ի հետևանքով առաջացած ճգնաժամը կարող է մեր երկրում հանդիսանալ տնտեսության կառուցվածքի փոփոխման և արդյունավետության բարձրացման, կյանքի որակի բարելավման խթան՝ ապահովելով տնտեսության համաչափ և կայուն զարգացում:

**ВЛИЯНИЕ ПАНДЕМИИ НА КАЧЕСТВО ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ**  
**Арутюнян М. М.**

Воздействие пандемии повлияло на качество жизни населения, а также на несколько экономических показателей, на выявление которых и направлена работа. Проявления общественной жизни в Армении, вызванной пандемией, социально-экономические изменения и вытекающие из них последствия пока не комментируются. Работа охватывает области, которые изменились в результате пандемии, а также рекомендации, которые помогут смягчить значительные последствия для экономики.

**Ключевые слова:** качество жизни, пандемия, целевые области, события.

## THE IMPACT OF THE PANDEMIC ON THE QUALITY OF LIFE OF THE POPULATION

Harutyunyan M. M.

The impact of the pandemic also affected the quality of life of the population, as well as several economic indicators, the findings of which are presented in this work. The manifestations of the public life conditioned by the pandemic in the Republic of Armenia, the socio-economic changes and consequences that result from it have not been commented yet. The work includes areas that have changed as a result of the pandemic, as well as recommendations that will help mitigate the significant effects on the economy.

**Keywords:** quality of life, pandemic, target areas, events.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՖՆ / Մակրոտնտեսական զարգացումներ և կանխատեսումներ, մակրոտնտեսական ամփոփագիր և շրջանակ/, 29 էջ <https://minfin.am/website/images/files/e199211f.docx> (25.09.2021)
2. Աղաբեկյան Է. Վարկավորման աճ՝ տնտեսական անկման պայմաններում//Ամբերդ տեղեկագիր: 2020: 4(5): էջ 5-13:
3. Մկրտչյան Ա., Օսիպյան Ա., Սահակյան Ս. / Covid-19 համավարակի հասարակական, տնտեսական և իրավական դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում <https://www.kas.de/documents/269781/0/Die+wirtschaftlichen%2C+rechtlichen+und+gesellschaftspolitischen+Ver%C3%A4nderungen+in+Armenien+aufgrund+von+COVID-19.pdf/cbab5ac9-7cb1-00e2-1e4a-4e5380280fc6?version=1.2&t=1599474150327> (20.09.2021)
4. Բոստանջյան Վ., Զախարյան Ա. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:// «Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն», Երևան: 2020: № 3 (33): էջ 67-76: [http://ysu.am/files/05V\\_Bostanjyan\\_A\\_Zakharyan.pdf](http://ysu.am/files/05V_Bostanjyan_A_Zakharyan.pdf) (20.09.2021)
5. <https://banks.am/am/news/interviews/20746> (20.09.2021)
6. [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/14Deposit%20and%20lending%20rates.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/14Deposit%20and%20lending%20rates.xls) (21.09.2021)

7. Socio-economic impact assesement of the COVID-19 outbreak in Armenian communities, Armenia 2020, 136 pages  
[https://armenia.un.org/sites/default/files/2021-07/SEIA%20COVID%20-%20Armenia%20-%20Final%20%20Report\\_16.09.2020.pdf](https://armenia.un.org/sites/default/files/2021-07/SEIA%20COVID%20-%20Armenia%20-%20Final%20%20Report_16.09.2020.pdf)
8. ՈԱԱԿ- Համավարակի ազդեցությունը կրթական գործընթացի վրա ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում, 2020թ.:
9. ՀՀ ֆինանսների նախարարություն-Քաղաքացու բյուջե 2021:  
[https://minfin.am/website/images/website/byuje%20ev%20krknaki%20harkum/Citizen\\_budget\\_Final\\_V%2001.02.2021\\_compressed.pdf](https://minfin.am/website/images/website/byuje%20ev%20krknaki%20harkum/Citizen_budget_Final_V%2001.02.2021_compressed.pdf)  
(06.03.2022)

**Տեղեկություններ հեղինակի մասին**

***Հարությունյան Մ. Մ. – հայցորդ***

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,*

*դասախոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ*

*Էլ. փոստ՝ [mariam972014@mail.ru](mailto:mariam972014@mail.ru)*

*Տրվել է խմբագրություն՝ 29.09.2021*

*Գրախոսվել է՝ 06.03.2022*